ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

# *ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ*

2016 թվականին

կատարած աշխատանքների

**ԵՐԵՎԱՆ 2017**

Կազմող՝ Անի Արղության
Հայաստանի ազգային գրադարանի գիտնական քարտուղար (ժ.պ.)



«Գիրք» հրատարակչություն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ 2016 Թ. ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

## 1. Գրադարանային հավաքածուի համալրում, պահպանում և տեղեկույթի սպասարկում

ՀԱԳ-ի հավաքածուն 01.01.2017թ. դրությամբ կազմում է 6.462.987 միավոր, որից գործող հավաքածուն՝ 6.194.158 միավոր, պահուստային հավաքածուն՝ 119.208 միավոր, գրքափոխանակության հավաքածուն՝ 149.621 միավոր:

Համաձայն ՀՀ մշակույթի նախարարի 2014 թ. փետրվարի N47-Ա «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի ռուսալեզու գրադարանային ֆոնդերի հաշվառման գործընթացն ուսումնասիրելու մասին» հրամանի, ըստ ժամանակացույցի ավարտվել են՝ Համալրման, Գրքափոխանակության, Մատենագիտության և գրադարանագիտության, Սպասարկման, Օտարալեզու գրականության մշակման և կատալոգների կազմակերպման, Անձեռնմխելի գրականության, Արվեստի գրականության և ոչ գրքային հրատարակությունների բաժինների ռուսերեն հավաքածուների վերահաշվառումը: Վերահաշվառման աշխատանքները շարունակվում են /ավարտվում է 01.12.2017/:

2016թ. ՀԱԳ-ի հավաքածուները համալրվել են 48.504 միավորով, որից սուբսիդիայի հաշվին 5.585 միավորով, նվիրատվությամբ՝ 34.151 միավորով, միջազգային գրքափոխանակությամբ՝ 1.679 միավորով, հայաստանյան գրքափոխանակությամբ՝ 651 միավորով: Պարտադիր օրինակների քանակն է՝ 6.168 միավոր, ՀԱԳ հրատարակություններ՝ 270 միավոր (տե՛ս նկ.1):

2016թ. ընթացքում Հայաստանի ազգային գրադարանի հավաքածուների համալրումը կատարվել է ՝ «Բյուրոկրատ», «Արտբրիջ»,«Հայ գիրք», գրախանութների՝ «Նոյան տապան», «Նաիրի աշխարհ», էլեկտրոնային գրավաճառ ցանցերի՝ «Amazon», «Catawiki», «AbeBooks», «Ebay», հասարակական և պետական կազմակերպությունների, ինչպես նաև անհատների միջոցով, որի արդյունքում գրադարանը համալրվել է 854 անուն հայագիտական բնույթի գրքերով, որից 127 միավորը՝ արտասահմանից: Ստացումներից 8 անուն/11 միավորը ֆաքսի-միլե հրատարակություններ են:

2016թ. խոշոր նվիրատուներից գրադարանը համալրվել է հետևյալ գրականությամբ.

ՀՀ Մշակույթի նախարարություն- 4.914 գիրք և 1047 միավոր,

«Ազգ» օրաթերթ- 4.586 մ. լրագիր,

ՀՀ սփյուռքի նախարարություն-19 միավոր գիրք, 333 մ. հանդես, 1916 մ. լրագիր,

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մատենա-դարան/Լիբանան/ 785 մ. գիրք, 20 մ. հանդես, 305 մ. լրագիր,

Հրաչ Ջադոյան (ԱՄՆ)-3.340 մ. գիրք,

Վահագն Դադրյան (ԱՄՆ)-224 մ. գիրք,

Թութունջյան ընտանիք/Լիբանան/-1.348 մ.:

Գրադարանային հավաքածուների ընթացիկ և հետադարձ գրականության համալրման նպատակով տարվել են աշխատանքներ շուրջ 477 հրատարակչական գործունեություն ծավալող կազմակերպությունների /60 հրատարակչություն, 59 կազմակերպություն, 358 խմբագրություն/, գրախանութների, հեղինակների և անհատների հետ:

Տեղական մամուլը 2016 թ. ստացվել է«Հայ մամուլ» գործակալության, խմբագրությունների, կազմակերպությունների, ինչպես նաև անհատների միջոցով:

Հայրենական և ռուսաստանյան մամուլի բաժանորդագրու-թյունը իրականացվել է«Էքսպրես Պլյուս», «Վիրպրեսս», «Պրես Ատտաշե» և «Նուս Գրուպ» գործակալությունների միջոցով:

2016թ. Հայաստանի ազգային գրադարանը համալրվել է 40 միավոր արժեքավոր գրականությամբ, որից 26 միավորը հայերեն է, 10 միավորը՝ հայատառ թուրքերեն, իսկ 4 միավորը՝ օտար

լեզուներով: Դրանցից 8 անունը հայերեն հնատիպ է (մինչև 1800թ., ընդ որում 1 անունը գրադարանում առհասարակ բացակա էր), 1 միավորը՝ հայատառ թուրքերեն, 4 միավորը՝ իտալերեն և լատիներեն: Ձեռք բերված (մինչև 1800թթ.) հայերեն հնատիպ հրատարակությունները ներկայացված են աղ.1-ում

Գրատպության թանգարանի համար 2016թ.ձեռք է բերվել 12 անուն նյութ: Դրանք են՝

Գիրք-2 միավոր,

Հուշամեդալ-4 միավոր,

Կրծքանշան-1 միավոր,

Պլակատ-1 միավոր,

Բացիկ-2 միավոր,

Նամականիշ-1 միավոր,

Քարտեզ-1 միավոր-1535թ./գնում արտասահմանից:

2016թ. գրադարանային հավաքածուն համալրվել է 48.504 միավորով, որից հայերեն՝ 33.668 միավոր, ռուսերեն՝ 6.988 միավոր, այլ լեզուներով՝ 7.848 միավոր: Համեմատելով 2014-2016թթ. ստացումներն ըստ լեզուների՝ նկատելի է հայերեն լեզվով հավաքածուի զգալի աճը (տե՛ս նկ. 2):

Ազգային գրադարանի 2010-2016թթ. համալրման ցուցանիշների համեմատական պատկերն ըստ ձեռքբերման աղբյուրների ներկայացված է նկ. 3-ում:

Համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի՝ «Հայկական ժառանգության էլեկտրոնային շտեմարան-ների ստեղծում» գերակա խնդրի՝ Հայաստանի ազգային գրադարանը որպես գլխադասային կազմակերպություն իրականացնում և համակարգում է «Հայ պարբերական մամուլ» և «Հայ գիրք» համահավաք շտեմարանների ձևավորումը:

«Հայ պարբերական մամուլ» շտեմարանում /tert.nla.am/ 1090 անուն պարբերականի /488 անուն թերթ և 602 անուն հանդես/ 2.091.691 էջ (թերթ՝ 502.455 էջ, հանդես՝ 1.589.236 էջ) թվային պատճենները հասանելի են օգտատերերին ազատ դիտման և բեռնաթափման կարգավիճակով:

2016թ. ընթացքում շտեմարանում տեղադրվել է պարբերականների թվային պատճենների 605.644 էջ (թերթ՝

244.497 էջ, հանդես՝ 361.147 էջ): Թվայնացման վիճակագրությունը ըստ տարիների բերված է նկ. 4-ում և ըստ 2016թ. ամիսների՝ նկ. 5-ում:

Պարբերականների էջերի մաքրման աշխատանքներին 2016 թվականից միացել են նաև մարզային ու համայնքային գրադարանները:

2016թ. ՀԱԳ-ի ընթերցողների թիվը 31.751 է: Սպասարկվել է 1.554.498 միավոր գրականություն: Սպասարկված գրադարանային փաստաթղթերի մեծ մասը՝ 32,2%-ը, հասարակական-քաղաքական բնագավառի գրականություն է (տե՛ս նկ. 6):

Հաշվետու տարում ազգային գրադարանի ընթերցողների հաճախումների թիվը կազմել է 268.998, որից՝

Սպասարկման բաժին-247.107
Արվեստի գրակ և ոչ գրք. հրատարակ.-2099
Նոտային-երաժշտական գրականության-973
Անձեռնմխելի գրակ. բաժին-6.985
Մատենագիտ. և գրադարանագիտ.-249
Ինտերնետ սրահ-6.820
Բաժնույթների բաժին-4.765

2016թ. գրադարանի գրքատացքը կազմել է 1.554.498 միավոր գրականություն: Ըստ առանձին ընթերցասրահների գրքատացքի պատկերը հետևյալն է՝

Սպասարկման բաժին-1.498.301
Արվեստի գրակ և ոչ գրք. հրատարակ-13.957
Նոտային-երաժշտական գրականության-1.536
Անձեռնմխելի գրակ. բաժին-23.413
Մատենագիտ. և գրադարանագիտ.-534
Ինտերնետ սրահ-11.570
Բաժնույթների բաժին-5.187

Ազգային գրադարանի գրքատացքի պատկերն ըստ լեզուների հետևյալն է՝

Հայերեն 1.089.198 միավոր կամ 70%

Ռուսերեն 382.927 միավոր կամ 24.7%
Այլ լեզուներով 82.373 միավոր կամ 5.3%

ՀԱԳ-ի կողմից իրականացվում է գրքափոխանակություն ՀՀ, ԼՂՀ և արտերկրի գրադարանների, կազմակերպությունների և անհատների հետ:

Իրականացվել է հնատիպ գրքերի հավաքածուից 5 միավոր գրքի և մշակութային նշանակության հավաքածուից 82 միավոր գրքի կազմի և էջերի վերականգնումը: Ախտահանվել է 21630 թերթ: Կազմակերպվել է գրադարանային հավաքածուից գրքերի և պարբերական մամուլի 23400 թերթ միավորի վերականգնումը:

Ձեռք են բերվել 29 միավոր աուդիոգրքեր տեսողության խնդիրներ ունեցող օգտվողների համար և կազմակերպվել է դրանց սպասարկումը:

Աշխատանք է տարվել միջազգային գրադարանների էլեկրոնային շտեմարաններից գրքերի ներբեռնման ուղղությամբ: Այդ կայքերն են՝ https://archive.org/, https://books.google.com/, http://www.bodleian.ox.ac.uk/dbooks, https://www.hathitrust.org/ և այլն:

2016 թվականին Ազգային գրադարանը թվայնացրել է 710 գիրք (159.350էջ), 25 քարտեզ:

Շարունակվում են «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարանի ձևավորման աշխատանքները: 2016 թվականին շտեմարանում մուտքագրվել և խմբագրվել է 34.468 գիրք, ընդ որում՝ նոր մուտք՝ 1.546 գիրք, խմբագրում՝ 32.922 գիրք: Կատարվել է նաև 2530 անուն գրքի լրիվ տեքստային պատճենի տեղադրումը:

Համաձայն ՀՀ կառավարության 24 նոյեմբերի 2016 թվականի N 1204-Ն որոշման «Հայաստանի ազգային գրապալատ» ՊՈԱԿ-ը միացման ձևով վերակազմակերպվել է միանալով «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ին:

## 2. Միջազգային համագործակցություն

Գրադարանային գործի ոլորտում միջազգային փոխգործակցության, կապերի ամրապնդման ու զարգացման նպատակով ՀԱԳ-ը համագործակցում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, «Վաչե և Թամար Մանուկյան» Մատենադարանի, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսության Մատենադարանի, Պոլսի Պատրիարքության Օրմանյան Մատենադարանի, Բեյրութի Հայկազյան համալսարանի, Կոպենհագենի թագավորական, Վիեննայի Մխիթարյան միաբանության գրադարանի, Ռուսաստանի Դաշնության, ԻԻՀ ազգային գրադարանի, Ռումինիայի, Գերմանիայի, Չեխիայի, Ֆրանսիայի և Բելառուսի ազգային գրադարանների հետ:

ՀԱԳ-ը անդամակցում է նաև «CENL», «IFLA», «БАЕ» միջազգային կազմակերպություններին:

2016թ. մարտի 3-ին Հայաստանի ազգային գրադարանի տնօրենի Տիգրան Զարգարյանի Նոր Ջուղա այցելության շրջագծում, համագործակցության հուշագիր կնքվեց Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի և Հայաստանի ազգային գրադարանի միջև:

Պրահայի պատմաճարտարապետական Կլիմենտինում՝ համալիրում հոկտեմբերի 12-ին տեղի ունեցավ «Հայ գրքարուեստը դարերու ընդմէջէն որք զծորանս Հոգւոյն արբին» ցուցահանդեսի հանդիսավոր բացումը: Ցուցահանդեսում ընդգրկվել են երկու տասնյակից ավելի հնատիպ գրքեր Հայաստանի ազգային գրադարանի հավաքածուից:

## Տեխնիկական վերազինում

2016թ. ազգային գրադարանը «Հայաստան» համահայկական հիմնադրամի և արգենտինահայ բարերար Հովսեփ Թահիթյայի կողմից ստացել է սերվեր և 5 համակարգիչ:

### Օտարալեզու գրքի կենտրոնի ստեղծում

2016թ. նոյեմբերի 30-ին Ղազախստանի Հանրապետության ազգային ակադեմիական գրադարանը Հայաստանի ազգային գրադարանում բացեց Ղազախական գրականության կենտրոն, որը հիանալի հնարավորություն է տալիս գրքի միջոցով հայ ընթերցողին ներկայացնելու Ղազախստանի ձեռքբերումները և նվաճումները: Ղազախստանի Հանրապետության ազգային ակադեմիական գրադարանի և Հայաստանի գրադարանի միջև կնքվեց փոխհամագործակցության հուշագիր:

## 3. Հայաստանի, արտերկրի գրադարանների և հայագիտական կենտրոնների հետ ռազմավարական համագործակցության զարգացում

Գիտահետազոտական աշխատանքներ

Հայկական գրադարանների միջազգային չորրորդ համաժողովը կայացավ 2016թ. հոկտեմբերի 17-19-ը Մայր Աթոռում (ք. Վաղարշապատ) և Հայաստանի ազգային գրադարանում (Երևան): Հայկական գրադարանների միջազգային համաժողովի մշտական կազմակերպիչներն են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը՝ ի դեմս «Վաչե և Թամար Մանուկյան» Մատենադարանի և ՀՀ Մշակույթի նախարարությունը՝ ի դեմս Հայաստանի ազգային գրադարանի: Համաժողովի նշանաբանն է՝ «Անցյալի պահպանություն հանուն ապագայի»:

Համաժողովը նվիրված էր հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրության 350-ամյակին: Համաժողովն արձանագրեց այն նոր ձեռքբերումները, որոնք տեղի են ունեցել հայկական գրադարանների երրորդ համաժողովից հետո: Արձանագրվեց, որ մատենագիտական շտեմարանների ձևավորման և գրադարանային հավաքածուների թվայնացման ուղղությամբ կատարվել են նշանակալի աշխատանքներ: Ձևավորվել են.

ա. «Հայ գիրք» շտեմարանը:

բ. Հայաստանի գրադարանների համահավաք էլեկտրոնային գրացուցակը:

գ. Հայագիտական հետազոտությունների գիտատեղեկատվական հանգույցը:

դ. «Հայ մամուլի համահավաք գրացուցակը»:

Համաժողովի մասնակիցներն էին Հայաստանի գրադարանային և տեղեկատվական գիտությունների մասնագետները, գործնական աշխատանքի փորձ ունեցող գրադարանավարները, հայագետները, արտերկրի գրադարաններում աշխատող հայ մասնագետները, հայ եկեղեցիներին կից գործող գրադարանների ներկայացուցիչները, հոգևորականները:

Համաժողովի նյութերը և բանաձևը հասանելի են http://www.flib.sci.am/arm/archive/image/conf.html հասցեից:

2015թ. ՀԱԳ-ի, ԲՈՀ-ի և ՀԷԳԿ (Հայաստանի էլեկտրոնային գրադարանների կոնսորցիում)-ի համատեղ ջանքերով թողարկվեց ատենախոսությունների բազմաառարկայական պահոցը, որում տեղ են գտել Հայաստանում պաշտպանված ատենախոսությունները, որոնք հասանելի են օգտատերերին բաց մատչելիության սկզբունքով:

«Հայաստանի ատենախոսությունների բաց մատչելիության պահոց = Open Access Repository of the Armenian Electronic Theses and Dissertations (Armenian ETD-OA)= Репозиторий диссертаций Армении открытого доступа» կիրառում է «Ստեղծագործական համայնքներ» հեղինակային իրավունքի արտոնագիրը, համաձայն որի հեղինակները պահպանում են իրենց հոդվածների հեղինակային սեփականության իրավունքը: Հեղինակը թույլ է տալիս ցանկացած անձի բեռնաքափել, օգտագործել, վերատպել, ձևափոխել, տարածել հոդվածներն այնքան ժամանակ, քանի դեռ հոդվածի իրական հեղինակ(ներ)ի և սկզբնաղբյուրի վրա կատարվում է հղում:

Գոյություն ունի հեղինակի համաձայնագիրը, ըստ որի

1. Հեղինակը հավաստում է, որ ԲՈՀ ներկայացվող ատենախոսությունը բնօրինակ է և չի հակասում ՀՀ օրենսդրության պահանջներին և այլ անձանց հեղինակային իրավունքներին:

2. Հեղինակը հավաստում է, որ ատենախոսության էլեկտրոնային տարբե-րակը կրկնում է ԲՈՀ-ին հանձնած թղթային օրինակին:
3. Հեղինակն անհատույց Հայաստանի ազգային գրադարանին է տրամադրում իր ատենախոսությունը՝ «Հայաստանի ատենախոսությունների» բաց մատչելիու-թյան (ՀԱԲՄ) պահոցում հանրային օգտագործման նպատակով տեղադրելու համար:[1]

Ըստ ԲՈՀ-ի կանոնակարգի՝ ատենախոսությունները հաստատվելուց հետո ուղարկվում են ազգային գրադարան:

«Բարձրագույն որակավորման հանձնաժողովի» հետ կնքված պայմանագրի համաձայն ՀՀ գիտական աստիճանա-շնորհման համակարգի գործունեությանն աջակցելու նպատակով ՀԱԳ-ը 2015թ. ընթացքում թվայնացրել է 1056 , իսկ 2016թ.՝ 810 անուն ատենախոսություն: 2016թ. Հայաստանի ատենախոսու-թյունների բաց մատչելիության պահոցում մուտքագրվել է գրադարանում առկա սեղմագրերից 2.681 անուն: Տարբեր կայքերից ներբեռնվել են սեղմագրերի PDF տարբերակները և տեղադրվել պահոցում: Ներբեռնված սեղմագրերի քանակն է՝ 326 անուն: ԲՈՀ-ից բերված ատենախոսությունների քանակն է՝ 288 անուն:

Հայաստանի ատենախոսությունների էլեկտրոնային շտեմարանը հասանելի է http://etd.asj-oa.am/հասցեից:

ՀԱԳ-ը աշխատանք է տարել Հայաստանի համայնքային գրադարանների վիճակագրական տվյալների հավաքագրման, համեմատման և վերլուծության ուղղությամբ: 2016թ. ընթացքում մշակույթի նախարարությունը Հայաստանի ազգային գրադարանի հետ համատեղ իրականացրել է Հայաստանի մարզային և համայնքային գրադարանների վիճակագրական հետազոտու-թյունը (նախապես սահմանված ձևանմուշի հիման վրա):

Հետազոտության օբյեկտ են հանդիսացել՝ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզային և համայնքային գրադարանները (տե՛ս աղ. 2):

---

[1] http://etd.asj-oa.am/information.html

## Կրթական ծրագրեր

2016 թվականին ազգային գրադարանում կազմակերպվել է «Արև» տեղեկատվական հաղորդակցման ծրագրից օգտվող անձանց համար հմտությունների ուսուցման մեկ գործնական պարապմունք:

2016 թ. հոկտեմբերի 19-26-ը ազգային գրադարանում անցկացվեցին վերապատրաստման դասընթացներ՝ «Վարպետաց դասեր»: Դասընթացներին մասնակցեցին 45 գրադարանավարներ 8 մարզերից: Դասընթացներն անցկացվել են հետևյալ թեմաներով՝ Գրադարանային հավաքածուի համալրման աղբյուրները և գրքափոխանակության խնդիրները, Amazon, eBay գրավաճառ ցանցեր, գրադարանային դասակարգում, հեղինակավոր գրառումներ, առարկայական խորագրեր, գրադարանային տեղեկատու-որոնողական ապարատի կազմակերպում և սպասարկում, էլեկտրոնային շտեմարաններ, գրադարաններ և սոցցանցեր, թվային գրադարանների առանձնահատկություններ և դրանց ստեղծման նախադրյալներ, հայկական գիտահետա-զոտական պահոցի ներկայացում, ՀՀ գրադարանային օրենսդրություն, ենթաօրենսդրական ակտեր, հայ ատենախոսու-թյունների պահոցի ներկայացում, ժամանակակից գիտական տեղեկատվական շտեմարաններ, գրադարանային փաստաթղթերի պահպանություն և սպասարկում, գրադարանային փաստաթղթերի վերականգնում և ամրակայում, գրադարանավարի վարվելակերպի կուլտուրան դեռահասների հետ աշխատանքները կազմակերպե-լիս, ընթերցանության կազմակերպումը պատանիների և երիտասարդների շրջանում, գրադարանների վիճակը և համալրման արդի խնդիրները: Դասընթացները վարեցին Հայաստանի ազգային, Խնկո-Ապոր անվ. ազգային մանկական, Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, Խ. Աբովյանի անվ. մանկավարժական համալսարանի գրադարանների առաջատար մասնագետներ: Դասընթացների ավարտին տրվեցին հավաստագրեր:

2016 թվականին Հայաստանի ազգային գրադարանի աշխատակազմը շրջիկ գրադարանով այցելել է 6 մարզերի 7 տարածաշրջաններ՝ Արարատի մարզ՝ Արարատի տարածաշրջան, Վայոց ձորի մարզ՝ Եղեգնաձորի տարածաշրջան, Տավուշի մարզ՝ Իջևանի տարածաշրջան, Տավուշի մարզ՝ Նոյեմբերյանի տարածաշրջան, Կոտայքի մարզ՝ Եղվարդի տարածաշրջան, Լոռու մարզ՝ Ստեփանավանի տարածաշրջան, Սյունիքի մարզ՝ Գորիսի տարածաշրջան, Շիրակի մարզ՝ Ամասիայի տարածաշրջան: Այցերի ընթացքում նվիրաբերվել է 2.375 միավոր գրականություն (տե՛ս աղ.3):

## 4. Հրատարակչական գործունեություն, գրադարանային միջոցառումներ և վերանորոգման աշխատանքներ

2016թ. տպագրվել են «Հայաստանի գրադարանները 2015թ. (Վիճակագրական վերլուծությունը)» և «Հիշարժան տարեթվեր 2017» գրքերը:

«Հիշարժան տարեթվեր 2017» գրքում ներառվել են տեղեկություններ 858 անձի, ՀՀ պետական և հիշատակի տոների, ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկում ներառված հայկական մշակութային արժեքների, ինչպես նաև ՄԱԿ-ի տոնացույցի մասին:

2012 թվականից սկսվել են «Արև» պարբերականի էլեկտրոնային շտեմարանի ստեղծման և համալրման աշխատանքներ: Ընթացքի մեջ են «Արև» պարբերականի 1936-1945թթ. հոդվածների մատենագիտական նկարագրության և մուտքագրման աշխատանքները: 2016 թվականին մուտքագրվել է 15.689 հոդված:

2015թ. Հայաստանի ազգային գրադարանը սկսեց «Հայերի մասնակցությունը Հայրենական Մեծ պատերազմին» էլեկտրոնային շտեմարանի ստեղծման աշխատանքները, որը ներառում է

թեմայի վերաբերյալ գրված գրքեր, հոդվածներ, լուսանկարներ և պլակատներ: Շտեմարանում ներառված է 997 նյութ: 2015թ.(476 նյութ/445 էջ), 2016թ. (521 նյութ/685 էջ):

2015թ. սեպտեմբերից սկսվել են «Արցախյան շարժում» էլեկտրոնային շտեմարանի ստեղծման աշխատանքները:

2016թ. մուտքագրվել է 396 նյութ, սքանավորվել և թվայնացվել է 494 էջ: «Արցախյան շարժում» շտեմարանում ներառված է 528 նյութ/3689 էջ:

2015թ. (132 նյութ/181 էջ), 2016թ. (396 նյութ/494 էջ):

2016թ. համալրվել է «Հայոց ցեղասպանությունը օտարալեզու մամուլում» էլեկտրոնային շտեմարանը անգլերեն և ֆրանսերեն հոդվածներով՝ 114 հոդված, 114 թվայնացված էջ: Շտեմարանում առկա նյութերի քանակն է՝ 1826 նյութ/1846 էջ:

2016թ. համալրվել է «Տպարաններ» էլեկտրոնային շտեմարանը, որտեղ 2016թ. հունվար ամսից ներառվում են նաև հրատարակչությունները: Մուտքագրվել են տեղեկություններ 9 տպարանների և 3 հրատարակչությունների (Զանգակ, ՎՄՎ-ՊՐԻՆՏ, Դարակ) մասին:

ՀԱԳ-ի կայքէջի շտեմարանում տեղադրվել են՝

1. «Հայերեն հատվածներ պարունակող այլալեզու գրքեր (մինչև 1800թ.)»

Traicte des chiffres (1586)
Mithridates (1555)
Linguarum (1538)

2. «Սենսորային կրպակ» ավելացվել և լրացվել է 152 անուն գիրք
3. Սկսվել և ավարտվել են մուտքագրման աշխատանքները «Մշակութային արժեքների» էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանում, այն հասանելի է՝ http://treasury.am/hy հասցեից:
   Մուտքագրվել է 2365 միավոր գիրք կամ 582 անուն հնատիպ գիրք:

4. Հայաստանի ազգային գրադարանը «Էլեկտրոնային Հայաստան» կայքէջում, որը հասանելի է http://www.pages.am/arm/ հասցեից, իրեն պատկանող

տիրույթում լրացրել է համապատասխան տեղեկատվությունը:

Գրադարանի կայքէջում կատարվել են հետևյալ փոփոխությունները՝

- «Հայերի մասնակցությունը Հայրենական Մեծ պատերազմին» էլեկտրոնային շտեմարանի ձևավորում,
- «Արցախյան շարժում» էլեկտրոնային շտեմարանի ձևավորում,
- «Տպարաններ և հրատարակչություններ» էլեկտրոնային շտեմարանի ձևավորում

## Ընթացիկ միջոցառումներ

2016 թվականին Հայաստանի ազգային գրադարանում կազմակերպվել է 82 միջոցառում, որից 18-ը՝ սուբսիդիայի հաշվին: Դրանք նշանավոր իրադարձություններին և անհատներին նվիրված միջոցառումներ են՝ ցուցահանդեսներ, գրքերի շնորհանդեսներ, քննարկումներ և այլն:

## Վերանորոգման աշխատանքներ

2016թ. ազգային գրադարանում կատարվել են ներքոհիշյալ վերանորոգման աշխատանքները.

Կազմատան տարածքում տեղադրվել են նոր լուսամուտներ, կատարվել է մուտքի վերակառուցում, վարչական մասնաշենքի մուտքի տանիքի վերանորոգում, ինչպես նաև վարչական և միջանկյալ մասնաշենքերի տանիքների մասնակի վերանորոգում:

Գրատպության թանգարանում կառուցվել է սանհանգույց: Չորացվել են թանգարանի՝ նախկինում խոնավ պատերն ու վերականգնվել: Կատարվել են աշխատանքներ թանգարանի բակում ընդհանուր խոնավությունը վերացնելու ուղղությամբ:

Մամուլի ընթերցասրահում փոխվել է 16 լուսամուտ, իսկ ընդհանուր ընթերցասրահում ՝ 10 լուսամուտ: Թամանյանական մասնաշենքում կատարվել է 4 սանհանգույցների նոր ավտոմատ լուսատուների մոնտաժում:

Կաթսայատան ջրի պոմպը փոխարինվել է նորով: Վերականգնողական աշխատանքներ են տարվել նաև ընդհանուր ընթերցասրահում, որտեղ տեղադրվել է 2 հատ օդամղիչ: Կերպարվեստի ընթերցասրահում նույնպես տեղադրվել է օդամղիչ:

Կատարվել է վարչական մասնաշենքի նկուղի տարածքի մաքրում և ազգային գրապալատի գրքերի տեղափոխություն:

## ՀԱՄԱԼՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2016թ. ընթացքում համալրման բաժնի կատարած համակարգված աշխատանքների արդյունքում գրադարանի հավաքածուն համալրվել է ընթացիկ և հետադարձ գրականությամբ:

Առ 01.01.2016թ. գրադարանի ընդհանուր հավաքածուն կազմել է 6.418.893 միավոր:

Գրադարանային փաստաթղթերի համալրումն իրականացվում է՝

Պարտադիր օրինակի ստացումով

Գնումներով և բաժանորդագրությամբ
Նվիրատվություններով
Գրքափոխանակությամբ

2016թ. գրադարանի ընդհանուր հավաքածուն համալրվել է 48.504 միավոր գրականությամբ, որից հայերեն՝ 33.668, ռուսերեն՝ 6.988, անգլերեն՝ 5.944, այլ լեզուներով՝ 1.904:

Գործող հավաքածուն առ 01.01.2016թ. կազմել է 6.163.708 միավոր, առ 01.01.2017թ. կազմում է 6.194.158 միավոր:

Պահուստային հավաքածուն առ 01.01.2016թ. կազմել է 117.918 միավոր, առ 01.01.2017թ. կազմում է 119.208 միավոր:

Գրքափոխանակության հավաքածուն առ 01.01.2016թ. կազմել է 137.267 միավոր, առ 01.01.2017թ. կազմում է 149.621 միավոր:

2016թ. գրադարանի ներքին շարժը կազմել է 8.373 միավոր:

Այսպիսով առ 01.01.2017թ. գրադարանի հավաքածուն կազմում է 6.462.987 միավոր:

Գրքային և այլ կրիչներով հրատարակությունների ստացման ենթաբաժնի միջոցով իրականացվել է գրադարանի հավաքածուների համալրումը տպագիր արտադրանքով (տե՛ս աղյ. 4):

Գրադարանային հավաքածուների ընթացիկ և հետադարձ գրականության համալրման նպատակով տարվել են աշխատանքներ գրախանութների, հեղինակների և անհատների հետ, ինչպես նաև շուրջ 477 հրատարակչական գործունեություն ծավալող և հասարակական կազմակերպությունների հետ /60 հրատ., 59 կազմակերպ., 358 խմբագր./:

2016թ. նոր անուն ստացումներն են `4064 անուն գրականություն, որից՝ 3875 անուն/8275 միավոր գիրք, 146 անուն հանդես և 43 անուն լրագիր:

Հետադարձ ստացումներից լրացվել են 0 օրինակներից՝ 172 միավոր հանդեսներ և 106 կազմ լրագրեր: Գրադարանում

առկա լրագրերի կազմերում բացակայող համարներից լրացվել է 389 միավոր, որից տրվել են Անձեռնմխելի գրականության բաժին 95 միավոր և Գլխավոր գրապահոց՝ 294 միավոր լրագրեր:

Բաժինը մասնակցում է նաև «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարանի կայքի աշխատանքներին: Ձեռք են բերվում գրադարանում բացակա գրքեր: «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարանի համապատասխան դաշտերում լրացվում և ջնջվում է «բացակա» բառը: ՀԱԳ-ում «բացակա» դրված 1651 անուն գրքերից լրացվել է 201 անուն:

Աշխատանքներ են տարվել գրադարանի էլեկտրոնային համահավաք (ALEPH) գրացուցակի հետ, կազմվել են ցուցակներ և ձեռք են բերվել գրադարանի 1 օրինակ գրքեր: Ենթաբաժինը համագործակցել է ինչպես գրադարանի ֆոնդապահ բաժինների, այնպես էլ Սպասարկման բաժնի հետ՝ հնարավորինս փորձելով լրացնել Սպասարկման բաժնի տրամադրած մերժված գրականությունը:

Արդյունքում լրացվել է՝

Գրադարանի 1 օրինակ գրքեր-874 անուն/1295 միավոր, որից հայերեն՝ 654 անուն, ռուսերեն՝ 132 անուն, այլ լեզուներով՝ 88 անուն:

Գլխավոր գրապահոցի 1 օրինակ գրքերից լրացվել է 558 անուն/1258 միավոր գրականություն:

Գրադրանի հետադարձ գրականության ձեռքբերումների արդյունքում 32 անուն/33 միավորի պատճենահանված տարբերակներից 2-ը նոր անուններ են: Պատճենահանումները ստացվել են տարբեր աղբյուրներից՝ անհատներից, հեղինակնե-րից, կազմակերպություններից:

2016թ. ընթացքում Տպագիր արտադրանքի վերականգնման և հրատարակչական ծառայությունների բաժնում վերականգնվել և կազմվել են 311 գիրք, 98 հանդես և 195 միավոր լրագիր, ինչպես նաև 1291 կազմ ընթացիկ և հետադարձ լրագրեր:

Աշխատանքներն են տարվել նաև Գրապահոցի առանց գույքահամարի հայերեն և ռուսերեն գրքերի հետ: Գրքերը գրանցվել են հատուկ նոր մատյաններում/հայերեն և ռուսերեն/, ստացել հերթական գույքահամար: 2016թ. առանց գույքահամար

գրքերից գրանցվել և գույքահամար են ստացել 6559 միավոր ռուսերեն և 23 միավոր հայերեն գրքեր:

Շարունակվում է Պահուստային հավաքածուի էլեկտրոնային ցուցակների գրանցման գործընթացը: Հայերեն հավաքածուից մուտքագրվել է 6270 անուն, ռուսերենից՝ 5531 անուն:

Կատարվել են Գլխավոր գրապահոցի հավաքածուի բացակա միավորների և Պահուստային հավաքածուի համեմատման և ստուգման աշխատանքերն, որոնց արդյունքում արձանագրվել է.

- ռուսալեզու հավաքածու է տրվել 16 միավոր գիրք, որից 12 միավորը համընկել է Գրապահոցի գույքահամարին, իսկ 4 միավորը եղել է Պահուստային ֆոնդի գույքահամարով:
- հայերեն հավաքածու է տրվել 34 միավոր Գրապահոցի 0 օրինակներ, 23 միավոր Գրապահոցի 1 օրինակներ և 3 միավոր գրքի գույքահամար համընկել է, որն առանձին ցուցակով տրվել է Գրապահոցին:

## Գրքափոխանակության աշխատանքներ

Գրքափոխանակության հավաքածուի գրականության մուտքը 2016թ. կազմել է 16.768 միավոր գրականություն, որից գիրք՝ 14.327 միավոր. Հանդես՝ 1.795 միավոր, ոչ գրքային հրատարակություններ՝ 646 միավոր:

Ըստ լեզուների ստացումը կազմում է.
Հայերեն-14.375 միավոր
Ռուսերեն-1.445 միավոր
Այլ լեզուներով-948 միավոր

Հայերեն՝ 14.375 միավոր, որից
Գիրք՝ 12.263 միավոր
Հանդես՝ 1.584 միավոր

Էլ. կրիչներ/DVD/՝ 39 միավոր
Բուկլետ՝ 119 միավոր
Նոտա՝ 237 միավոր
Օրացույց՝ 5 միավոր
Նկար՝ 1 միավոր
Քարտեզ՝ 3 միավոր
Ատլաս՝ 2 միավոր
Մանր նյութ՝ 122 միավոր

Ռուսերեն՝ 1.445 միավոր
Գիրք՝ 1.263 միավոր
Հանդես՝ 104 միավոր
Բուկլետ՝ 78 միավոր

Այլ լեզուներով՝ 948 միավոր
Գիրք՝ 801 միավոր
Հանդես՝ 107 միավոր
Բուկլեր՝ 38 միավոր
Էլ. կրիչներ/DVD/՝ 2 միավոր

Ստացված գրականությունը քարտագրվել է, գրանցվել բաժնի մատյաններում, ինչպես նաև տեղադրվել և մուտքագրվել հավաքածուի էլեկտրոնային գրացուցակում:

2016թ. գրքափոխանակության հավաքածուի ելքը կազմել է 5010 միավոր գրականություն, որից Հայաստանյան և արտասահմանյան գրքափոխանակություն՝ 1000 միավոր գրականություն:

Շրջիկ գրադարանի միջոցով՝ 2.375 միավոր գրականություն:

Գրականության տրամադրում՝ 1039 միավոր գրականություն:

Ներքին շարժ գրադարանի բաժիններին՝ 596 միավոր գրականություն:

Բաժինն աշխատել է մարզային և համայնքային գրադարաններից ստացված պահանջարկ ունեցող գրականության ցուցակների հետ (տե՛ս աղյ. 5):

Այցեր են կազմակերպվել նաև ՀՀ Արդարադատության Նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ և «Նորքի տուն-ինտերնատ»: Նվիրաբերվել է 144 միավոր գրականություն:

Միջազգային գրքափոխանակություն է կատարվել 42 երկրների 125 կազմակերպու-թյունների հետ:

Արտասահմանյան 32 կազմակերպության տրվել է 177 միավոր գրականություն և ստացվել է 1003 միավոր գրականություն (տե՛ս աղյ. 6): Միջազգային գրքափոխանակություն է կատարվել 11 անհատի հետ, որոնց տրվել է 16 միավոր գրականություն և ստացվել է 676 միավոր գրականություն (տե՛ս աղյ. 7):

Արտաքին կապերի ենթաբաժնի միջոցով 2016թ. ընթացքում սփյուռքահայ համայնքներից ստացվել է 1798 միավոր գրականություն, որից թերթ-1239 միավոր, ամսագիր-411 միավոր, գիրք-107 միավոր, շնորհավորագիր-1 միավոր, օրացույց-12 միավոր, DVD/CD-2 միավոր, հրավիրատոմս-5 միավոր, բացիկ շնորհ.-2 միավոր, բուկլետ-17 միավոր, ալբոմ-1 միավոր, ազդագիր-1 միավոր:

Արտաքին կապերի ենթաբաժնի միջոցով գրադարանը նվիրատվություն է ստացել «Լինգվիստիկա» հրատարակչու-թյունից, Դիրան Ավագյանից՝ էլեկտրոնային գրքեր հայկական եկեղեցիների մասին, Լևոն Օսիպյանից, Գոհար Ռշտունուց, Սանկտ-Պետերբուրգից, Վլադիմիրից, Գելենջիկից, Գերմանիայից, Լեհաստանից, Հունաստանից, Իրանից և Շվեյցարիայից:

Փոխարենն ուղարկվել է 23 փաթեթ՝ 88 միավոր գրականություն:

ՀՀ Մշակույթի նախարարի 26.02.2014թ. N47-Ա «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի ռուսալեզու գրադարանային ֆոնդերի հաշվառման գործընթացն ուսումնա-սիրելու մասին հրամանի համաձայն, 2014թ. մարտի 3-ից սկսվել է

Գլխավոր գրապահոցի ռուսերեն գրքերի բացակա միավորների ստուգում-համեմատումը գրքափոխանակության հավաքածուների ֆոնդերի հետ: Ստուգման արդյունքում գրքափոխանակության հավաքածուից Գլխավոր գրապահոց է ուղարկվել 405 միավոր ռուսերեն գրականություն:

Աշխատանք է տարվել նաև Գլխավոր գրապահոցի հայերեն հավաքածուի բացակա միավորների լրացման ուղղությամբ: Ստուգվել է հայերեն գրականության 8 ցուցակ, որից 156 միավոր առանց գույքահամար ուղարկվել է Գլխավոր գրապահոց:

Տպագիր արտադրանքի վերականգնողական բաժնում վերականգնվել է 15 միավոր գիրք:

## Բաժնույթների ենթաբաժին

Բաժնույթների բաժինն ունի 73 միջգրադարանային բաժանորդ, որից 8-ը՝ (Տավուշի, Արագածոտնի, Կոտայքի, Գեղարքունիքի, Լոռու, Արարատի, Շիրակի, Վայոց ձորի) մարզային գրադարաններն են:

2016թ. ընթացքում ՄԳԱ-ով սպասարկվել է 1085 միավոր գրականություն: Պայմանագրեր են կնքվել Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի, Սուրբ Թերեզայի անվան բժշկական համալսարանի, Հյուսիսային համալսարանի, Հայբուսակ համալսարանի, Գլածոր համալսարանի, Հայկական պետական մանկավարժական համալսարանի և մի շարք այլ համալսարանների և կազմակերպությունների հետ: ՄԳԱ-ով ԱՊՀ երկրներ է ուղարկվել 41 պատվեր, որից 22-ը՝ կատարվել է, 2-ը՝ ընթացքի մեջ է, 17-ը՝ մերժվել է մեկ օրինակ լինելու պատճառով: Պատվերներ են ստացվել և կատարվել Բելառուսի/8 պատվեր/, Կալինինգրադի /8պատվեր/ և Վրաստանի /1 պատվեր/ գրադարաններից:

Անհատական բաժնույթից 2016թ. ընթացքում օգտվել է 197 ընթերցող: Սպասարկվել է՝ 2184 միավոր գրականություն:

Ներքին բաժնույթից 2016թ. ընթացքում օգտվել է 87 բաժանորդ: Սպասարկվել է 1918 միավոր գրականություն:

## ՕՏԱՐԱԼԵԶՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԿԱՏԱԼՈԳՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺԻՆ

Օտարալեզու գրականության մշակման և կատալոգների կազմակերպման բաժինը 2016թ. Համալրման բաժնից ստացել է 22.642 միավոր տպագիր արտադրանք և էլեկտրոնային կրիչներ, որից 12.370 միավորը գրքային, 533 միավորը՝ ոչ գրքային հրատարակություններ, 1107 միավոր սեղմագիր, 123 ատենախոսություն, 899 էլեկտրոնային կրիչներ (CD, DVD), 3005 միավոր ամսագիր և շարունակվող հրատարակություններ, 4605 միավոր լրագիր:

Հաշվետու տարում ռուսալեզու գրականության մշակման ենթաբաժինը ստացել է 12.373 միավոր գրականություն, որից 5091 գիրք, 184 ոչ գրքային հրատարակություններ, 390 սեղմագիր, 95 ատենախոսություն, 217 էլեկտրոնային կրիչներ, 2144 ամսագիր և շարունակվող հրատարակություններ, 4252 լրագիր:

Գրքերից 3928 ուղարկվել է Գլխավոր գրապահոց, 963-ը՝ Անձեռնմխելի գրականության բաժին, 180-ը՝ Արվեստի գրականության և ոչ գրքային հրատարակությունների բաժին, 1-ը՝ Մատենագիտու-թյան և գրադարանագիտության բաժին, 19-ը՝ Սպասարկման բաժնի ընդհանուր ընթերցասրահ:

270 սեղմագիր ուղարկվել է Գլխավոր գրապահոց, 120 միավոր սեղմագիր և 95 միավոր ատենախոսություն ուղարկվել է Սպասարկման բաժնի Ատենախոսությունների և սեղմագրերի ենթաբաժին:

2144 միավոր ամսագիր (182 կազմ) և շարունակվող հրատարակություններից 1491 միավոր ամսագիր և 87 միավոր շարունակական հրատարակություն մշակվել և ուղարկվել է Գլխավոր գրապահոց, 1-ը՝ «Արև» ընթերցասրահ, 3-ը՝ Արվեստի գրականության և ոչ գրքային հրատարակու-թյունների բաժին, 49-ը՝ Մատենագիտության և գրադարանագիտության բաժին, 513-ը՝ Անձեռնմխելի գրականության բաժին: Ստացված 182 կազմ, 2144 միավոր ամսագրերից 22-ը՝ նոր անուններ են:

217 կազմ լրագրերից (4252 միավոր), 188-ը՝ ուղարկվել է Գլխավոր գրապահոց (4172 միավոր), 29-ը՝ ուղարկվել է Անձեռնմխելի գրականության բաժին (80 միավոր): Մշակվել է 15 նոր անուն լրագիր:

2016թ. ռուսալեզու գրականության ենթաբաժինը կատարել է 9.850 քարտի մատենագիտական նկարագրություն:

Դասակարգվել է 5.282 միավոր ռուսալեզու գրականություն:

Հաշվետու տարում Օտարալեզու գրակա-նության ենթաբաժինը Համալրման բաժնից ստացել է 10.303 միավոր գրականություն, որից 7313 գիրք, 349 ոչ գրքային հրատարա-կություններ, 717 սեղմագիր, 28 ատենախոսություն, 682 էլեկտրո-նային կրիչներ, 852 ամսագիր, 362 լրագիր (66 կազմ):

Գրքերից 5.734 ուղարկվել է Գլխավոր գրապահոց, 1.247-ը՝ Անձեռնմխելի գրականության բաժին, 282-ը՝ Արվեստի գրականու-թյան և ոչ գրքային հրատարակությունների բաժին, 50-ը՝ Սպասարկման բաժին:

1214 միավոր պարբերական հրատարակություններից 66 կազմ (813 միավոր) ամսագիր և 362 միավոր լրագիր ուղարկվել է Գլխավոր գրապահոց: 36 միավոր ամսագիր ուղարկվել է Անձեռնմխելի գրականության բաժին, 3-ը՝ Արվեստի գրականության և ոչ գրքային հրատարակությունների բաժին:

2016թ. Օտարալեզու գրականության ենթաբաժինը կատարել է 12.243 քարտի մատենագիտական նկարագրություն:

Դասակարգվել է 5.667 միավոր այլ լեզուներով գրականություն:

Հաշվետու տարում քարտարաններում տեղադրվել է 68.334 քարտ, որից այբբենական ծառայողական քարտարանում՝ 16.978

ընթացիկ և ոչ ընթացիկ տպագիր արտադրանքի և էլեկտրոնային կրիչների մատենագիտական գրառման քարտեր, այբբենական ընթերցողական քարտարանում՝ 16.711 քարտ, կարգային ծառայողական քարտարանում՝ 16.970 քարտ, կարգային ընթերցաղական քարտարանում՝ 17.675 քարտ:

2016 թ. ընթացքում գրադարանային ավտոմատացված տեղեկատվական համակարգի (ALEPH) ծրագրի միջոցով մուտքագրվել է 25.461 անուն և 53.265 միավոր տպագիր արտադրանք:

Խմբագրվել են ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուներով 240 քարտարաններ: Վերը նշված լեզուների այբբենական քարտարաններում լրացվել են.

22.372 քարտ՝ ընթերցողական քարտարանում,

10.970 քարտ՝ ծառայողական քարտարանում: Ընդամենը լրացվել և տեղադրվել է՝ 33.342 խմբագրված բացակա քարտ:

2016թ. հաշվառվել է 565.973 միավոր և 175.739 անուն Գլխավոր գրապահոցում առկա և բացակա ռուսալեզու տպագիր արտադրանք:

Գիրք՝ 214.142 միավոր (165.680 անուն), որից 182.719 միավոր (153.463 անունը)՝ Գլխավոր գրապահոցում առկա գրքերն են, 31.423 միավոր (12.217 անունը)՝ բացակա գրքերն են:

2015-2016թթ. ռուսալեզու շարունակվող հրատարակություններից հաշվառվել է 119.235 միավոր (8.921անուն) շարունակվող հրատարակություն:

2016թ. ընթացքում հաշվառվել է՝ 58.563 միավոր (5.908 անուն) ռուսալեզու շարունակվող հրատարակություն:

Ռեֆերատային հանդեսներ՝ 8.392 միավոր:

Մինչև 1980թ. հրատարակված ռուսալեզու ամսագրերից՝ 273.087 միավոր (3.668 անուն): Հաշվառվել է նաև Գլխավոր գրապահոցում գտնվող 11.789 միավոր (483 անուն) ամսագիր:

Հաշվետու տարում մշակվել է 234 անուն անմշակ այլալեզու գիրք, որոնք լեզուների չիմացության պատճառով մնացել էին անմշակ:

Արաբերեն՝ 60 անուն, չինարեն՝ 150 անուն, վրացերեն՝ 24 անուն, որոնցից 208 միավորը՝ Գլխավոր գրապահոցից, 26 միավորը՝ Անձեռնմխելի գրականության բաժնից:

Անձեռնմխելի բաժնի Նվիրատվությունների և անհատական հավաքածուների ենթաբաժնի ֆոնդերից մուտքագրվել է 2.779 միավոր գրականություն, ինչպես նաև 4.387 միավոր հայատառ թուրքերեն մամուլ:

Հաշվետու տարում մշակվել և գրադարանային ավտոմատացված տեղեկատվական համակարգի միջոցով առցանց մուտքագրվել և քարտագրվել է (OR) արևելագիտական հավաքածուից 2.249 միավոր գիրք:

«Հայ գիրք» շտեմարանում խմբագրվել է 612 անուն գիրք, կատարվել է 248՝ անձնանունային հեղինակավոր գրառում, 1՝ թեմատիկ հեղինակավոր գրառում, 3 կազմակերպությունների հեղինակավոր գրառումներ, 792՝ աշխարհագրական անունների հեղինակավոր գրառումներ:

«Հայ մամուլ» համահավաք գրացուցակում 2016թ. մուտքագրվել են 51 անուն (1849 միավոր) օտարալեզու հայագիտական ամսագիր և 21 անուն (2.921 միավոր) օտարալեզու հայագիտական լրագիր:

2016թ. Օտարալեզու գրականության մշակման ենթաբաժինը ստացել է 8.992 միավոր գրականություն՝ 51 լեզուներով (ոչ շարունակական), որից 290-ը՝ բազմալեզու են:

Հաշվետու տարում Օտարալեզու գրականության ենթաբաժինը ստացել է 1.277 միավոր մամուլ՝ 24 լեզուներով, որից 24-ը՝ բազմալեզու:

## ՀԱՅԵՐԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԿԱՏԱԼՈԳՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺԻՆ

Հայերեն գրականության և կատալոգների կազմակերպման բաժինը Համալրման բաժնից ստացել է 42.918 միավոր գրականություն, որից 11.719 գիրք, 4.636 ամսագիր, 950 կազմ

թերթ (23.317 միավոր), 266 սեղմագիր, 406 ատենախոսություն, 385 CD, 2.189 ոչ գրքային հրատարակություններ:

Գրքերից 7.737 միավոր ուղարկվել է Գլխավոր գրապահոց, 3.343-ը՝ Անձեռնմխելի գրականության բաժին, 465-ը՝ Արվեստի գրականության և ոչ գրքային հրատարակությունների բաժին, 19-ը՝ Մատենագիտության և գրադարանագիտության բաժին, 110-ը՝ ընթերցասրահներ, 43-ը՝ աշխատանքային գրադարաններ, 2-ը՝ Գրատպության թանգարան:

2016թ. ստացվել է 4.636 միավոր ամսագիր, որից 2.851-ն ուղարկվել է Գլխավոր գրապահոց, 1.268-ը՝ Պարբերական մամուլի ուսումնասիրման ենթաբաժին, 147-ը՝ Մատենագիտության և գրադարանագիտության բաժին, 1-ը՝ Արվեստի գրականության և ոչ գրքային հրատարա-կությունների բաժին, 12-ը՝ «Արև» ընթերցասրահ, 4-ը՝ Նվիրատվությունների և անհատական հավաքածուների ենթաբաժին, 4-ը՝ Նոտային-երաժշտական գրականության ենթաբաժին, 1-ը՝ Գրատպության թանգարան, 348-ը՝ Գիտաշխատողների և մամուլի ընթերցասրահ:

Մշակվել է 24 նոր անուն ամսագիր:

2016թ. մշակվել է 950 կազմ թերթ (23.317 միավոր), որից 358 կազմը (7.975 միավոր) ուղարկվել է պարբերական մամուլի ուսումնասիրման ենթաբաժին, 592 կազմը (15.332 միավոր)՝ Գլխավոր գրապահոց, 1 միավորն ուղարկվել է Նվիրատվու-թյունների և անհատական հավաքածուների ենթաբաժին, 9 միավորը՝ Նոտային-երաժշտական գրականության ենթաբաժին:

Հաշվետու տարում ստացվել և մշակվել է 16 նոր անուն թերթ:

Այբբենական ծառայողական գրացուցակում տեղադրվել է 7.174 քարտ՝ նույնքան ընթերցողա-կանում:

Կարգային ծառայողական գրացուցակում տեղադրվել է 7.543 քարտ՝ նույնքան ընթերցողականում:

Պարբերականների այբբենական ընթերցողական և այբբե-նական ծառայողական գրացուցակներում տեղադրվել է 4.154 քարտ՝ յուրաքանչյուրում՝ 2.077-ական: Կարգային գրացուցակում տեղադրվել է 132 քարտ՝ յուրաքանչյուրում՝ 66-ական:

2015թ. հունվարի 15-ից բաժնում սկսվել են ծառայողական և ընթերցողական այբբենական գրացուցակների խմբագրման

աշխատանքները: Խմբագրվել և լրացվել են Ա-Մ տառերի այբբենական ծառայողական և ընթեցողական գրացուցակների բոլոր արկղերն ամբողջությամբ (140 արկղ): Հայերեն գրականության այբբենական ընթերցողական գրացուցակի Ա-Մ տառերի հատվածում լրացվել է 8. 231 քարտ, իսկ այբբենական ծառայողական գրացուցակում՝ 354:

«Հայ մամուլ» համահավաք շտեմարանում կատարվել է 1.147 նյութի մատենագիտական նկարագրություն, որից 644 անունը՝ ամսագիր, 503-ը՝ թերթ: Ստեղծվել է 331 աղյուսակ, որոնցում արտացոլվել են 14.396 միավոր ամսագիր և թերթ:

Ստեղծվել է 1.025 հեղինակավոր գրառում՝ 20 անձնանունային, 830 թեմատիկ, 164 աշխարհագրական անունների և 11 կազմակերպության անվան:

«Հայ գիրք» համահավաք շտեմարանում 2016թ. ընթացքում կատարվել է 2.265 գրքի մատենագիտական նկարագրություն, որից 1.098-ը՝ նոր ձեռք բերված:

80 մատենագիտական գրառմանը կցվել է թվային պատճենը (16.241 թվայնացված գրքային էջ): Շտեմարանում ստեղծվել է 884 հեղինակավոր գրառում, 482 անձնանունային, 39 աշխարհագրական անուն, 15 կազմակերպության անուն, 316 հնգալեզու (հայերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն ռուսերեն) թեմատիկ, 32՝ համընդհանուր վերնագրերի:

էլեկտրոնային համահավաք գրացուցակում ստեղծվել է 84 հեղինակավոր գրառում, որից 63 թեմատիկ, 17 անձնանունային և 4 համընդհանուր վերնագրերի գրառումներ:

Երեք շտեմարանում բաժինը ստեղծել է 1993 հեղինակավոր գրառում:

էլեկտրոնային համահավաք գրացուցակում կատարվել է 2.430 գրքի մատենագիտական նկարագրություն և միացման միջոցով արտացոլվել է 11.250 միավոր գրականություն: Նույն գրացուցակում խմբագրվել է 1.430 հայերեն գրքի մատենագիտական նկարագրություն:

Նախկին Գրականության մշակման և կատալոգների կազմակերպման բաժնի հայերեն խմբային և մանր նյութերի ֆոնդից ակտով համալրման բաժնին է հանձնվել 286 միավոր մանր նյութ:

# ՖՈՆԴԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Առ 01.01.2016թ. բաժնի հավաքածուները կազմել են 5.947.313 միավոր: 2016թ. բաժնի հավաքածուները համալրվել են 24.471 միավորով, որից՝ ուղեկցող փաստաթղթով 22.732 միավոր, ներքին շարժ (ցուցակով) 1.739 միավոր գրականությամբ, իսկ ակտերով՝ կից ցուցակներով Համալրման բաժնին է հանձնվել 1.735 միավոր:

Այսպիսով՝ առ 01.01.2017թ. Գլխավոր գրապահոցի հավաքածուները կազմում են 5.970.049 միավոր[2] , որից հայերեն հավաքածուն վերահաշվառվել, համալրվել, ավարտվել և կազմում է 566.606 միավոր, որից պատճենահանված է 835, ապակետիպ՝ 6, լուսապատճե՝ 1:

ա) հայերեն գրքեր-292.991 միավոր, որից պատճենահանված է 818 միավոր, ապակետիպ 6, լուսապատճե 1:

բ) հայերեն հանդեսներ-2.079 անուն, որը կազմում է 239.751 միավոր, որից պատճենահանված է 17 միավոր:

գ) հայերեն լրագրեր-2.032 անուն, որը կազմում է 30.592 կազմ:

դ) հայերեն մանրաժապավեն-2.164 անուն, որը կազմում է 3.272 միավոր:

2016թ. ռուսերեն հավաքածուից հաշվառվել է 838.950 միավոր, որից

ա) գրքեր- 153.463 անուն, որը կազմում է 182.719 միավոր, որից՝ պատճենահանված է-28 միավոր:

բ) 1. Հանդեսներ- 1980թ.-ից առ այսօր հրատարակված-24 անուն, որը կազմում է 1.491 միավոր:

---

[2]Ֆոնդը ստուգման և վերահաշվառման գործընթացում է

2. հանդեսներ մինչև 1980թ.-ը հրատարակված-3.668 անուն, որը կազմում է 273.087 միավոր

գ) լրագիր-9 անուն, որը կազմում է 188 կազմ

դ) ռեֆերատային հանդեսներ-8.392 միավոր

ե) շարունակվող հրատարակություններ-5.908 անուն, որը կազմում է 58.563 միավոր (ավարտվել է):

զ) սեղմագրեր (քանակական հաշվառում)-314.510 միավոր (ավարտվել է):

## Գրականության անվանական վերահաշվառում

ՀՀ մշակույթի նախարարի 26.02.2014թ. 47-Ա հրամանի համաձայն 2014թ. մարտի 3-ից սկսվեց Գլխավոր գրապահոցում պահպանվող ռուսալեզու գրքերի, հանդեսների, լրագրերի և մանրաժապավենների հաշվառման գործընթացը:

Առ 01.01.2017թ. ռուսերեն հավաքածուներից համալրվել և ավարտվել է 1.952.995 միավոր:

ա) ռուսերեն գրքեր-450.216 անուն, որը կազմում է 541.276 միավոր, որից պատճենահանված է 115 միավոր:

բ) 1. ռուսերեն հանդեսներ 1980թ.-ից առ այսօր հրատարակված-2.257 անուն, որը կազմում է 202.234 միավոր, որից պատճենահանված է 2 անուն, 4 միավոր:

2. ռուսերեն հանդեսներ մինչև 1980թ.-ը հրատարակված-5.536 անուն, որը կազմում է 426.728 միավոր (ավարտվել է 01.12.2016թ.):

գ) ռուսերեն լրագրեր-695 անուն, որը կազմում է 17.280 կազմ:

դ) ռուսերեն մանրաժապավեններ-706 միավոր:

ե) ռուսերեն ռեֆերատային հանդեսներ-65.138 միավոր:

զ) ռուսերեն շարունակվող հրատարակություններ- 8.921 անուն, որը կազմում է 119.235 միավոր:

է) ռուսերեն սեղմագրեր (քանակական հաշվառում)-580.398 միավոր:

Այսպիսով՝ առ 01.01.2017թ. հայերեն և ռուսերեն հավաքածուներից ավարտվել է 1.978.325 միավոր գրականության համալրումն ու հաշվառումը, որից հայերեն՝ 566.606 միավոր և ռուսերեն՝ 1.411.719 միավոր (առանց գրքերի):

Գլխավոր գրապահոցի հավաքածուների համալրումն ըստ հրատարակության տեսակների և լեզուների

2016թ. Գլխավոր գրապահոցի հավաքածուները համալրվել են 24.471 միավոր գրականությամբ:

Գիրք- 15.660 միավոր (հայերեն- 7.697 միավոր, ռուսերեն- 3.827 միավոր, օտարալեզու- 4.136 միավոր):

Հանդես – 5.242 միավոր (հայերեն- 2.851 միավոր, ռուսերեն-1.491 միավոր, օտարալեզու- 813 միավոր, շարունակվող հրատարակություններ- 87 միավոր):

Լրագիր- 846 կազմ (հայերեն-592 կազմ, ռուսերեն-188 կազմ, օտարալեզու- 66 կազմ):

Սեղմագիր- 984 միավոր (ռուսերեն- 270 միավոր, ուկրաիներեն- 714 միավոր):

Ներքին շարժ (ցուցակներով)- 1.739 միավոր (հայերեն գրքեր- 40 միավոր, ռուսերեն գրքեր- 101 միավոր, օտարալեզու- 1.598 միավոր):

Բոլոր նոր ստացվող հայերեն և ռուսերեն լեզուներով գրքերը կնքվել և գրանցվել են համապատասխան ենթաբաժինների գույքամատյան-ներում, դասդասվել և տեղադրվել են գրադարակների վրա: Լրագրերը և հանդեսները գրանցվել են մամուլի ենթաբաժնի քարտարաններում, իսկ նոր անունների համար գրվել են քարտեր, կնքվել և տեղադրվել գրադարակների վրա:

2016թ. Մամուլի ենթաբաժնի հավաքածուները համալրվել են 185 նոր անուններով, որից հայերեն հանդեսներ՝ 39 անուն, հայերեն լրագրեր՝ 11 անուն, ռուսերեն հանդեսներ՝ 24 անուն, ռուսերեն լրագրեր՝ 9 անուն, օտարալեզու հանդեսներ՝ 82 անուն, օտարալեզու լրագրեր՝ 20 անուն:

2016թ. Համալրման բաժնի միջոցով, հետադարձ համալրումով լրացվել են հայերեն լրագրերի բացակա համարներ: Այն կազմում է 294 միավոր, որի համար կազմվել է 16 ակտ:

2016թ. Գլխավոր գրապահոց մուտք է գործել 74.494 պատվիրաթերթիկ: Բավարարվել է 74.264-ը, որից՝ 4.463-ը զբաղված են եղել ընթերցասրահներում և բավարարվել են տեղում: 2016թ. Գլխավոր գրապահոցից Անձեռնմխելի գրականության բաժնին է ուղարկվել 31 պատվիրաթերթիկ: Մերժվել է 230 պատվիրաթերթիկ, որից՝

- տեղում չկա 26 պատվիրաթերթիկ
- 204-ը՝ մեկ օրինակ է

Մերժված պատվիրաթերթիկների հիման վրա կազմվել են ցուցակներ և հանձնվել Համալրման բաժին՝ հետադարձ համալրման համար:

2016թ. բաժնի 0 (զրո) օրինակ գրքերից համալրվել է 874 անուն (հայերեն՝ 654, ռուսերեն՝ 132, օտարալեզու՝ 88 անուն), որը կազմումում է 1.291 միավոր, իսկ մեկ օրինակ գրքերից համալրվել է 558 անուն (հայերեն՝ 529, ռուսերեն՝ 21, օտարալեզու՝ 8 անուն), որը կազմում է 1.258 միավոր:

Սպասարկված գրականության տացքն ըստ լեզուների՝

ա) հայերեն- 57.850 միավոր, որը կազմում է սպասարկված պատվիրաթերթիկների 77,8%-ը

բ) ռուսերեն- 14.776 միավոր, որը կազմում է 19,9%-ը

գ) օտարալեզու- 1.638 միավոր, որը կազմում է 2,3%-ը

Գրականության տացքն ըստ հրատարակու-թյունների տեսակների՝

Գիրք՝ 58.670 միավոր, հանդես՝ 8.102 միավոր, լրագիր՝ 7.087 կազմ, շարունակվող հրատարա-կություններ՝ 340 միավոր, սեղմագիր՝ 49 միավոր, մանրաժապավեն՝ 16 միավոր:

Բաժին մուտք գործած պատվիրաթերթիկների 99,9%-ը բավարարվել է, մերժվել է 0,1%-ը:

Բաժնի վերադարձը կազմել է 74.264 միավոր, որից ներքին վերադարձը՝ 3.920 միավոր սպասարկվել է գրադարանից դուրս՝

Բաժնույթների բաժնի միջոցով՝ ներքին միջգրադարանային և անհատական պատվիրաթերթիկներով:

Գրականության դասդասում և տեղադրումը կազմել է 158.535 միավոր, որից՝

- բաժնի վերադարձը- 74.264 միավոր
- հավաքածուների համալրում- 24.471 միավոր
- «ALEPH» ծրագրով մուտքագրման համար հանձնված և ետ ստացած գրականություն- 51.496 միավոր
- Տպագիր արտադրանքի վերականգնման բաժնին հանձնված և ետ ստացած գրականություն- 8.304 միավոր

Գրականության ստուգում-տեղաշարժը կազմել է 512.500 միավոր: Գրադարակների վրա տեղադրված գրականության առկայության և ճշտության ստուգումը կազմել է 351.500 միավոր: Լրացվել է -34.500 ֆորմուլյար, բջիջների ստուգում՝ 150.250, նորոգվել է-19.750 գրքի պիտակ: Բաժնի գույքամատյաններում գրանցվող հայերեն գրքերին փակցվել է 71.588 համարային պիտակ:

Շարունակվում են Գլխավոր գրապահոցի ֆոնդերի մուտքագրման աշխատանքները Հայաստանյան գրադարանների միասնական համահավաք գրացուցակում «ALEPH» ծրագրով: 2016թ. ընթացքում մուտքագրվել է 51.496 միավոր գրականություն, որից՝ ռուսերեն գրքեր՝ 38.809 միավոր, ռուսերեն հանդեսներ՝ 8.532 միավոր, օտարալեզու գրքեր՝ 2.112 միավոր, օտարալեզու հանդեսներ՝ հայագիտական՝ 2.043 միավոր:

Շարունակվում են ազգային գրադարանի տնօրենի 31 օգոստոսի 2015թ. N 472-Ա հրամանի համաձայն Գլխավոր գրապահոցի հայերեն և ռուսերեն հավաքածուների ստուգման և հաշվառման արդյունքում հայտնաբերված առանց գույքահամար գրքերին գույքահամար տալու գործընթացը: 2016թ. 6.559 միավորի տրվել է գույքահամար, որից 44-ը մուտքագրվել է «ALEPH» ծրագրով: Ընդհանուր առմամբ նոր գույքահամարներ են ստացել

7.211 ռուսերեն գրքեր: Ավարտված են՝ А , Б , Е - К տառերը: Հայերեն 23 գրքի Համալրման բաժնում տրվել է նոր գույքահամար:

ՀՀ ազգային գրադարանի 18 հուլիսի 2012 թվականի N 90-Ա § 3 հրամանի համաձայն 2012 թվականի հուլիսի 20-ից սկսվել է Գլխավոր գրապահոցի հայերեն և ռուսերեն լեզուներով գրքերի մատյանային գրանցումը: 2016թ.-ին գրանցվել են 71.588 հայերեն գրքեր, իսկ ռուսերեն գրքերի մատյանային գրանցումը վերահաշվառման հետ կապված 2014թ. ժամանակավորապես դադարեցվել է: 2012-2016թթ. բաժնի գույքամատյաններում գրանցվել է 343.543 գիրք, որից հայերեն՝ 227.846 միավոր, ռուսերեն՝ 115.697 միավոր:

Ավարտվել են հայերեն գրքերի 0 (զրո), 1-ին, 2-րդ, 4-րդ, 7-րդ և 8-րդ բաժինների գրականության մատյանային գրանցումը:

Բաժնում փոշեհանվել է 755.500 միավոր գրականություն: Տպագիր արտադրանքի վերականգնման բաժնին է հանձնվել 8.304 միավոր գրականություն: 2016թ. վերականգնվել է 15 գրքի 512 էջ:

## ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Անձեռնմխելի գրականության բաժնի հավաքածուն առ 01.01.2017թ. դրությամբ կազմում է 372.054 միավոր (01.01.2016թ. դրությամբ կազմել է 365.686 միավոր):

Հաշվետու ժամանակահատվածում բաժինը համալրվել է 7.806 միավոր գրականությամբ, որից նոր ստացում՝ 5.314 միավոր, ներքին շարժ՝ 2.492 միավոր:

Գիրք-5.498 միավոր
Լրագիր-388 կազմ
Ամսագիր-1.822 միավոր
Օրացույց-21 միավոր
Նոտա-42 միավոր
Ատլաս-2 միավոր

Պլակատ-3 միավոր
Քարտեզ-4 միավոր
Նկար-25 միավոր
Ձմայիլ-1 միավոր

Ըստ լեզուների.

Հայերեն-5.022 միավոր
Ռուսերեն-1.505 միավոր
Այլալեզու-1.279 միավոր

Ըստ ենթաբաժինների.

1. Հայ գրքի ուսումնասիրման ենթաբաժին- 75 միավոր, որից նոր ստացում՝ 40 միավոր, ներքին շարժ՝ 35 միավոր:
2. Նվիրատվությունների և անհատական հավաքածուների ենթաբաժին-2.872 միավոր, որից նոր ստացում՝ 577 միավոր, ներքին շարժ՝ 2.295 միավոր:
3. Հայ գրքի պահպանման /1851թ./ ենթաբաժին-3.233 միավոր, որից նոր ստացում՝ 3.090 միավոր, ներքին շարժ՝ 143 միավոր:
4. Պարբերական մամուլի ուսումնասիրման ենթաբաժին-1.626 կազմ/ միավոր, որից նոր ստացում՝ 1.607 միավոր, ամսագիր՝1.268 միավոր (նոր անուն 27), լրագիր՝ 358 կազմ (նոր անուն 16):

2016թ. Անձեռնմխելի գրականության բաժնի ելքը կազմել է 1.438 միավոր:

Անձեռնմխելի գրականության բաժնի հավաքածուն 01.01.2017թ. դրությամբ կազմում է՝ 372.054 միավոր, որից գիրք՝ 205.534 միավոր, լրագիր՝ 19.482 կազմ, ամսագիր՝ 144.297 միավոր, նոտային հրատարակություն՝ 1670 միավոր, քարտեզ՝ 200 միավոր, պլակատ՝ 16 միավոր, օրացույց՝ 120 միավոր, կոնդակ՝ 55 միավոր, հազվագյուտ ոչ գրքային հրատարակ.՝ 13 միավոր, ձայնապնակ՝ 2 միավոր, CD՝ 4 միավոր, DVD՝ 1 միավոր, միկրոժապավեն՝ 475 միավոր, մանր նյութ՝ 141 միավոր, ատլաս՝ 18 միավոր, գծանկար՝ 1 միավոր, նկար՝ 25 միավոր:

Ըստ լեզուների.

Հայերեն- 270.223 միավոր

Ռուսերեն- 61.163 միավոր

Այլալեզու- 40.668 միավոր

Ըստ ենթաբաժինների.

Հայ գրքի ուսումնասիրման ենթաբաժին՝ 14.686 միավոր,

Հայ գրքի պահպանման /1851թ./ ենթաբաժին՝ 120.413 միավոր,

Նվիրատվությունների և անհատական հավաքածուների ենթաբաժին՝ 115.842 միավոր,

Պարբերական մամուլի ուսումնասիրման ենթաբաժին՝ 121.113 միավոր:

01.01.2017թ. դրությամբ Անձեռմխելի գրականության բաժնի ընթերցասրահի հավաքածուն կազմում է 880 միավոր գրականություն, որից 570 միավորը առձեռն գրականություն, իսկ 310 միավորը Նապոլեոն Բոնապարտի հավաքածուն:

2016թ. բաժնի միջոցով սքանավորվել է 800.458 էջ գրականություն, որից՝ գիրք-1.033 անուն (234.758 էջ), ամսագիր-223 անուն (232.873 էջ), լրագիր-148 անուն (168.240 էջ), Գլխավոր գրապահոցից լրացված ամսագրեր-19 անուն (520 էջ), Գլխավոր գրապահոցից լրացված լրագրեր-17 անուն (475 էջ), Մատենագիտության և գրադարանագիտության բաժնից բերված նյութեր-4.535 էջ, քարտեզներ-41 անուն (41 էջ), ատենախոսու-թյուն-810 անուն (136.664 էջ), ԳԱԹ-ից՝ Կոմիտասի ձեռագիր նյութեր-689 ծրար (20.326 էջ), հայերեն հնատիպ 1512-1800թթ. գրքերում առկա ձեռագիր նշումների, հիշատակարանների, կնիքների սքանավորում-320 միավոր (2.026 էջ):

Բաժնի մեծածավալ լրագրերը սքանավորվում են ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանում: 2016թ. սքանավորվել է 29 անուն, 116 կազմ լրագիր (53.500 էջ):

2016թ. EAP-ի (Endangered Archives Project or Programme)- Վտանգված արխիվների նախագիծ կամ ծրագրի շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները.

